ՔԱՂՎԱԾՔ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2-2009
«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

2009 թվականի ապրիլի 30-ին, ժամը 11:00-ին, Շվեյցարիայի Համադաշնության, Ժնև քաղաքի, Դե Մալանյի փողոց, 22 հասցեում տեղի ունեցավ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը, որին մասնակցում էր «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի հիմնադիր և միակ բաժնետեր Վարդան Սիրմաքեսը (8335 ձայնի իրավունքով):

Հաշվի առնելով, որ ժողովին ապահովված է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի ձայնի իրավունք տվող տեղաբաշխված սովորական բաժնետոմսերով (ձայների գումարային քանակը՝ 8335) բաժնետերերի 100 տոկոս մասնակցություն՝ ընդհանուր ժողովը համարվեց իրավասու:

Ժողովը նախագահում էր Վ. Սիրմաքեսը, իսկ ժողովի քարտուղարն էր Ա. Սելլեֆյանը:

ՕՐԱԿԱՐԳ

2. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2008 թվականի շահույթը բաշխելու հարցը:

Օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի Բաժնետերերի ընդհանուր ժողովը

ՈՐՈՇԵՑ

Երկրորդ հարցով (զեկուցող՝ Ա. Սելլեֆյան)

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի 2008 թվականի ֆինանսական տարվա 279.763.000 (երկու հարյուր յոթանասունինը միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամ շահույթից 100.000.000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամը հատկացնել պահուստային հիմնադրամի (գլխավոր պահուստի) համալրմանը՝ այն դարձնելով 200.000.000 (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամ, իսկ մնացած 179.763.000 (մեկ հարյուր յոթանասունինը միլիոն յոթ հարյուր վաթսուներեք հազար) ՀՀ դրամը թողնել որպես չբաշխված շահույթ՝ դարձնելով այն 459,118.000 (չորս հարյուր հիսունինը միլիոն մեկ հարյուր տասնութ հազար) ՀՀ դրամ:

Որոշումն ընդունվեց միաձայն:

Որոշումն ուժի մեջ է մտնում 2009թ. մայիսի 01-ից:

Սույն արձանագրությունը կազմված է 30.04.2009թ.-ին, հայերեն լեզվով, երկու օրինակից, բաղկացած է 2 (երկու) էջից:

Ժողովի նախագահ՝ *ստորագրություն* Վ. Սիրմաքես

Ժողովի քարտուղար՝ *ստորագրություն* Ա. Սելլեֆյան